# «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ խորհրդում ներկայացուցիչ նշանակելու մասին

2022-10-21

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Որոշում թիվ 1/511 Ա

21.10.2022

«ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» փակ բաժնետիրական ընկերության խորհրդում ներկայացուցիչ նշանակելու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է1», «ը» կետերը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Ո ր ո շ ու մ ե մ.

1. «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» փակ բաժնետիրական ընկերության խորհրդում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ներկայացուցիչ նշանակել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի անդամ Լևոն Սահակյանին։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով։

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ